



Միսաք Մեծարեւնց

Հյուղը

Դաշտի ճամբու մը վըրան,
կամ ըստորոտը լերան,
ուղեորին Ժամանման
ըսպասող հյուղն ըլլայի:
Ու գգուանքիս կանչէի
ես ճամբորդներն անԺաման.
ու ճամբուն վրայ մենաւոր,
ու ճամբուն վրայ ոսկեման,
եկտրներուն դիմաւոր՝
ծրխանիս ծուխն ամպէի:

Ու գրգանքիս կանչէի
ուղեւորներ պարտասուն,
ու բարեւի մը փոխան
հագար բարիք ես տայի:
Հագար բարիք ես տայի,
գոյը կրակին ճարճատուն
կուրծքը բերրի դաշտերուն,
բոլոր միրգերն աշունի,
ու մեղր ու կաթ ու գինի...

Ու լսէի ես ցայգուն,
քովը կրակին ճարճատուն,

երգն իրիկուան եկտրին.
ու ջամբէի ես ցայգուն
երագներով պատարուն
նինջ՝ իրիկուան եկտրին:
Ու լսէի ես այգուն,
սրտապատար ու տրոփուն
գովքն իրիկուան եկտրին.
ու դիտէի ես այգուն,
ու խոկայի օրն ի բուն
երթն իրիկուան եկտրին...:

Ու ձմեռներն ալ համբուն,
հըրաւիրակ գըւարթուն,
կանքնէի քովը ճամբուն.
ու ձիւնապատ հէք մարդուն
եւ հայրօրէն, լայնաբաց
երկու թեւերս պարզէի.
մի՛շտ քաղցրագին, նիւթացած
հըրաւէ՛րն եւ ըլլայի:

Ա՛հ, ըլլայի՛, ըլլայի՛,
դաշտի ճամբու մը վըրան,
կամ ըստորոտը լերան,
ուղեւորին ժամանման
ըսպասող հի՛ւն ըլլայի: